ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.10.2020Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու **9** անդամները:

Բացակայում են **Ն.Վարդանյանը, Վ.Բաբայանը, Տ.Եփրեմյանը, Ա.Խլղաթյանը Ն.Վարդանյանը, Ա.Փանոսյանը:**

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Բ. Բալբաբյանը, Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-007-0045-0319 կադաստրային ծածկագրից առանձնացված ք. Չարենցավան Երիտասարդության փողոց թիվ 6/9 հասցեում գտնվող 0.08789 հա բնակավայրերի նշանակության հողամասը Հայաստանի Հանրապետությանը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8 դեմ - 1 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

1.Զարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ ***առաջարկում եմ.*** Զարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Զարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամուտների ֆոնդային մասի՝

ա. 8411 «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «106146.162» թիվը փոխարինել «107759.262» թվով,

2) Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի՝ 5113 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» սինթետիկ հաշվի «5000.0» թիվը փոխարինել «6613.1» թվով,

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ - 0 ձեռնպահ -1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2.Զարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի.***առաջարկում եմ.*** ի գիտություն ընդունել Զարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ - 0 ձեռնպահ -1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-007-0045-0319 կադաստրային ծածկագրից առանձնացված ք. Չարենցավան Երիտասարդության փողոց թիվ 6/9 հասցեում գտնվող 0.08789 հա բնակավայրերի նշանակության հողամասը Հայաստանի Հանրապետությանը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020 թվականի հուլիսի 15-ի թիվ 264-Ա որոշումը «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին մարզահրապարակ կառուցելու նպատակով.***առաջարկում եմ***. Չարենցավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ք. Չարենցավան Երիտասարդության փողոց թիվ 6/9 հասցեում գտնվող 0,08789 հա բնակավայրերի նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ «Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին մարզահրապարակ կառուցելու նպատակով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ-0** **ձեռնպահ-1**

Բաբայան Նարեկ

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Պողոսյան Մնացական

Սահակյան Երեմ

Վարդանյան Սարգիս

Գրիգորյան Հակոբ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**